

#### ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 4

29.03.2019 թվականին կնքված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու և 2022 թվականի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը հաստատելու մասին

քաղաք Գորիս

22.02.2022թ. (Քսաներու փետրվարի երկու հազար քսաներկու թվական)

«Արդշինբանկ» ՓԲԸ (հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի փողոց, թիվ 13 (տասներեք) վարչական շենք», գրանցման վկայական. թիվ 0394, գրանցման համարը՝ 83, գրանցման ամսաթիվը՝ 25.02.2003թ. (քսանհինգը փետրվարի երկու հազար երեք թվական), այսուհետ՝ «Վարձատու», ի դեմս «Գորիս» մասնաճյուղի կառավարիչ Տիգրան Բարխուդարյանի (Հայաստանի Հանրապետության նույնականացման քարտ. 006359673, տրված 17.08.2017թ. (տասնյոթը օգոստոսի երկու հազար տասյոթ թվական), 032-ի կողմից, բնակության/հաշվառման վայրի և փոստային հասցեն. «Հայաստանի Հանրապետություն, քաղաք Գորիս, Գ. Նժդեհի փ., տ. 43»), ով գործում է համաձայն 12.01.2022թ. (տասերկուսը հունվար երկու հազար քսաներկու թվական) տրված № ԻԳ-780-183 լիազորագրի, մի կողմից, և

«Հայաստանի Հանրապետությունը պետական եկամուտների կոմիտեն» (հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Մ. Խորենացու Փ. 3,7, գրանցման համար՝ 286.184.1025088, ՀՎՀՀ 02647057), ի դեմս գլխավոր քարտուղար՝ Էդգար Գևորգյանի, որի անունից լիազորագրով հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի գործերի կառավարման վարչության վարչատնտեսական բաժնի տնտեսվար Քոչար Ղազարյանը (անձնագիր AT0499650, տրված 15.06.2020թ. 032-ի կողմից), այսուհետ՝ «Վարձակալ», մյուս կողմից,

միասին անվանվելով Կողմեր, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով Կողմերի միջև 29.03.2019թ. կնքված և սեղանամատյանում թիվ 931 համարով գրանցված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Սույն համաձայնագրով Կողմերը փոխադարձ համաձայնության են գալիս՝
  - 1.1 Պայմանագրի 1.2 կետը փոփոխել, շարադրել հետևյալ խմբագրությամբ.  
«1.2 Պայմանագիրը կնքվում է մինչև 31.12.2024թ. (երեսունմեկը դեկտեմբերի երկու հազար քսանչորս թվականը) ներառյալ:»
  - 1.2 Հաստատել 2022 թվականի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված 1-ի, որը հանդիսանում է սույն համաձայնագրի և Պայմանագրի անբաժանելի մասը:
2. Սկսած 01.01.2023թ.-ից Պայմանագրի 4.1 կետի առաջին պարբերության «212.535 (երկու հարյուր տասներկու հազար հինգ հարյուր երեսունհինգ)» բառերը փոխարինել «389.647 (երեք հարյուր ութսունհինգ հազար վեց հարյուր քառասունյոթ) բառերով:
3. Սույն համաձայնագիրը հանդիսանում է Վարձակալության պայմանագրի անբաժանելի մասը:
4. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում այն կնքելու և պետական գրանցման պահից և տարածում է 2022թ. հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ, իսկ 2-րդ կետով սահմանված փոփոխությունը՝ 2023թ. հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:
5. Համաձայնագիրը ենթակա է վավերացման նոտարական կարգով, իսկ սույն համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման պետական լիազոր մարմնում

Վարձակալի կողմից՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարվում են Վարձատուի կողմից, ի համաձայնագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը Վարձակալի կողմից:

6. Սույն համաձայնագիրը Կողմերի համար բարձրաձայն ընթերցվեց նոտարի կողմից, և Կողմերին պարզաբանվեցին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ գործող նորմերը:

7. Սույն համաձայնագիրը կազմված է հայերենով, 4 (չորս) հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակներից, որոնցից մեկական օրինակ կողմերից յուրաքանչյուրին, մեկը վավերացնող նոտարական գրասենյակին, մեկը՝ իրավունքի պետական գրանցում իրականացնող մարմնին: Համաձայնագրի օրինակների միջև հակասություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է նոտարի մոտ պահվող օրինակին:

8. Կողմերի ստորագրությունները.

«ՎԱՐՁԱՏՈՒ»

«Արդշինբանկ» ՓԲԸ


Հասցե՝ ք. Երևան, Գր. Լուսավորիչի փող.13

ՀՎՀՀ 02566492


Հ/Հ 2470036863310000

«Գորիս» մասնաճյուղի կառավարիչ՝

Տ. Բարխուդարյան



(ստորագրություն)



«ՎԱՐՁԱԿԱԼ»

Հայաստանի Հանրապետության

պետական եկամուտների կոմիտե

ք. Երևան, Մ. Խորենացի 3, 7


ՀՎՀՀ 02647057

Հ/Հ 900011054013


Կենտրոնական գանձապետարան

Գործառնական վարչություն

Լիազորված անձ՝ Քոչար Ղազարյան



(ստորագրություն)



Հավելված 1  
 29.03.2019թ., կնքված և սեղանամատյանում թիվ 931 համարով  
 գրանցված ոչ բնակելի տարածքի վարձակալության  
 պայմանագրում փոփոխություն կատարելու և 2022 թվականի  
 ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը  
 հաստատելու մասին թիվ 4 համաձայնագրի

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\***

«Ն» դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել «Ն» 2022թ. պետական բյուջետային միջոցների հաշվին՝ ըստ ամիսների՝ ընդ որում											
		փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը՝ տարի
1.	ք. Գորիս, Տաթևացու 9 հասցեում գտնվող վարչական շենքի երկրորդ հարկից 472.3քմ. ոչ բնակելի տարածքի վարձակալություն	212,535	425,070	637,605	850,140	1,062,675	1,275,210	1,487,745	1,700,280	1,912,815	2,125,350	2,550,420	2,550,420

\* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով



**«ՎԱՐՁԱՏՈՒ»**  
 «Արդշինբանկ» ՓԲԸ  
 Հասցե՝ ք. Երևան, Գր. Լուսավորիչի փող.13  
 ՀՎՀՀ 02566492  
 Հ/Հ 2470036863310000  
 «Գորիս» մասնաճյուղի կառավարիչ՝  
 Տ. Բարխուդարյան

**«ՎԱՐՁԱԿԱԼ»**  
 Հայաստանի Հանրապետության  
 պետական եկամուտների կոմիտե  
 ք. Երևան, Մ. Խորենացի 3, 7  
 ՀՎՀՀ 02647057  
 Հ/Հ 900011054013  
 Կենտրոնական գանձապետարան  
 Գործառնական վարչություն

(ստորագրություն)

Լիազորված անձ՝ Քոչար Ղազարյան

(ստորագրություն)



Երկու հազար քսաներկու թվականի փետրվարի քսաներկուսին սույն համաձայնագիրը վավերացված է իմ ՀՀ «Սյունիքի մարզ» նոտարական տարածքի նոտար Առնո Գրիգորի Առաքելյանիս կողմից: Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ վարձատուի ներկայացուցչի իրավունքը ստուգված է:

ՀՀ Քաղ. Օրենսգրքի 135 հոդվածի համաձայն սույն համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող պետական կառավարման հանրապետական մարմնի համապատասխան ստորաբաժանումում:

Գրանցված է գրանցամատյանում 564

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հանրաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար

Առնո Գրիգորի Առաքելյան





Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.

Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten signature in blue ink, appearing to be 'S. M. H.', written over a large, faint circular stamp.

